



Ա. ՏԱՐԻ

ԹԻՒ 7

ՅՈՒՆՈՒԱՐ 1927

ԱՄՈՒՍՆԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՎԿԱՅԱԳԻՐ

— «Պ. բժիշկ, պիտի ամուսնանանք և եկած ենք նախապէս բժկական քննութեան ենթարկուելու»:

Երիտասարդներ են, կամ օրիորդներ, առանձին կամ իրենց խօսեցեալին հետ, որոնք ամուսնանալիք առաջ կ'ուղեն իրենց առողջութիւնը հաստատող վկայագիր մը ստանալ: Ժամանակէ մը ի վեր դիմումները աւելի յաճախաղէպ դարձած են և մենք մասնաւոր գոհունակութեամբ կ'արձանագրենք ժողովրդի լայն խաւերուն մէջ այս այնքան կենսական սովորութեան տարածման: Մանաւանդ որ ամուսնութեան թեկնածուները, ինքնարերաբար, առանց որևէ պարտադրութեան, կը դիմեն վկայագիր ձեռք բերելու համար:

Այլևս կարելի չէ ժխտել որ մարդկութեան առողջութիւնն ու կենսունակութիւնը հիմէն քանդող հիւանդութիւնները — սիֆիլիս, ջերմամիզութիւն, թոքախտ, ալքոլամոլութիւն, ջղային և ընտանեկան ժառանգական կարդ մը ախտեր — նոյնքան ծաւալած են մեր, որքան ուրիշ ժողովրդներու մէջ: Պատերազմէն առաջ թերեւս ներելի էր պատրանքներ ունենալ այս մասին. սակայն ներկայիս դառն իրականութիւն է: Վերջին տասնեակ մը տարիներու ընթացքին ծաւալած հիւանդութիւնները ոչ միայն խախտեցին ներկայ սերունդի մեծամասնութեան կազմը, այլ և կը սպառնան ապագայ սերունդի գոյութեան:

Քաղաքակիրթ երկիրներու մէջ երկար ատենէ ի վեր կը խորհին մարդկային ցեղը ազնուացնելու միջոցներուն վրայ:

Հին օրերուն, Սպարտացիները գետը կը նետէին և կը խեղդէին տիսեղծ ու հիւանդ երեխաները: Ամերիկայի և Զուիցերիոյ մէջ կարգ մը նահանգներ միջոցներ ձեռք առածէին, անբաղձամի այրերը ամլացնելու կամ մէկուացնելու համար որպէս զի զաւակ չկրնան ունենալ: Սակայն ներկայիս բաղդատարար ամենէն գործնական միջոցը նկատուածէ ամուսնութեան պահուն առողջ զոյգերու ընտրութիւնը, նախամուսնական բժշկական քննութեամբ:

Այժմ, ընդհանրապէս արևմտեան բոլոր երկիրներուն մէջ շարժում մը սկսած է ի նպաստ նախամուսնական քննութեան և վկայագրին — պարտադիր կամ կամաւոր: Վերջերս բրօֆ. Փինառ ալ նոյնիմաստ օրինագիծ մը ներկայացուց Փրանսական խորհրդարանին:

Մեր մէջ, 1904-ին, Խրիմեան Հայրիկ կոնդակով քահանաներուն յանձնարարեց ամուսնացող զոյգերէն բժշկական վկայագիր պահանջել, ամուսնական օրհնութիւն տալէ առաջ: Զինադադարէն յետոյ ալ, Պոլսոյ Պատրիարքարանը, Բժշկական Միութեան թելագրութեամբ, պարտադիր դարձուց ամուսնական բժշկական վկայագիրը:

Ըսենք անմիջապէս թէ առողջապահական խնդիրներու մէջ, օրէնքներու պարտադրութիւնը ապարդիւն կը մնայ, որքան ատեն որ ժողովուրդը նախապէս այդ ուղղութեամբ դաստիարակուած չէ: Նոյնիսկ հակառակ արդիւնք կրնայ տալ: Այսպէս, բժշկական վկայագիր ձեռք բերելու համար, թեկնածուները ամենէն ձեռնհաս ու խղճամիտ բժիշկէն իսկ կրնան ծածկել իրենց հիւանդութիւնը — օրինակ՝ սիֆիլիսը — եթէ իրենց վրայ միայն օրէնքը ճնշէ և ոչ այն գիտակցութիւնը թէ այդ քննութիւնը թանկագին երաշխիք մըն է իրենց և իրենց զաւակներուն ապագայ կենսունակութեան համար:

Գիտենք թէ այդ ուղղութեամբ ժողովրդի դաստիարակութիւնը երկարատեև և յամառ աշխատանքի կը կարօտի: Սակայն նկատի առնելով խնդրին կենսական կարևորութիւնը, պէտք չէ ընկրկիլ այդ ծանր աշխատանքին առջեւ:

Այս պարտականութիւնը պէտք է ստանձնեն Կարմիր Խաչերը, Բժշկական Միութիւններու կամ անհատ բժիշկներու և ուրիշ ձեռնհաս անձերու աջակցութեամբ:

Բոխնք արդէն ուրիշ խմբագրականով մը թէ ժամանակէ որ կ. Խաչերը դադրին այլես պարզ նպաստահաւաք և նպաստարաշխ մարմին մը ըլլալէ և Եւրոպական ու Ամերիկեան կ. Խաչերու նման լրջօրէն լծուին մեր մէջ ընկերային հիւանդութիւններու դէմ պայքարին, սահմանափակերու համար զանոնք և անոնց անհատին և ցեղին վրայ ունեցած ահաւոր հետեւանքները։ Նախամուսնական բժշկական քննութիւնը, այդ պայքարին կարեոր մէկ օղակը կը կազմէ։

Եւ արդէն այս տարի մայիս 29-էն յունիս 5, Վաշինգտոնի մէջ կայացած կ. Խաչերու համամերիկեան համագումարը, որուն կը մասնակցէին երկու Ամերիկաներու 18 կ. Խաչերէն զատ, Եւրոպական և ասիսական 16 պետութիւններու կ. Խաչերը (բացի Խորհրդային Երկիրներէն), «...կը յանձնարարէ կ. Խաչերու բոլոր Ընկերակցութիւններուն, նախամուսնական բժշկական քննութեան անհրաժեշտութիւնը բացատրել և ըմբռնել տալ իրենց երկրի ժողովուրդներուն և ի պահանջել հարկին դիւրացնել այդ քննութիւնը»։

Այս թելագրութիւնը ինքնին ամբողջ ծրագիր մը կ'ամփոփէ։ Մեր մէջ կարելի է լուսաբանել հասարակութիւնը ախտաւոր ամուսնութեանց ահաւոր հետեւանքներու մասին, դասախոսութիւններով, մամուլով, թուուցիկներով և այլն։ Եկեղեցական պաշտօնեաններու միջոցով տեսակ մը բարոյական ճնշում գործ գնել ամուսնութեան թեկնածուներուն — մանչ թէ աղջիկ — ինչպէս նաև անոնց ծնողներուն վրայ, որպէս զի բժշկական քննութեան ենթարկուին թեկնածուները։ Ասկէ զատ, օդապակար է, այդ քննութիւնը կատարելու համար, այցելարաններ (Consultation) հաստատել հոն ուր կարելի է, ինչպէս Փարիզի մէջ։

Դեռ կ'անդրադառնանք այս շատ կարեոր խնդրի մանրամասնութիւններուն։

«ԲՈՒԺԱՆՔ» կը շնորհաւորէ Նոր Տարին իր ընթերցողներուն